




Ուռնաձողկ

ցուրտ երկիրներու . ծովուն աւազուտ ու ապառաժուտ տեղուանքը չափորժիր , և տղմալից յատակները կը սիրէ : Բոտ ասելոյ ոմանց՝ Վիճճայի ափունքներուն վրայ յուլիսի , օգոստոսի և սեպտեմբերի մէջ կ'երևայ . բայց Սարսէյլ և Կարմիր ծովէն չըջապատած Բրաբիոյ ափունքը շատ սակաւագիւտ է :

Ուռնաձկան միսը պինդ է ու անհամ , և կ'ըսուի թէ միայն Մաշկադի նաւաստիներն են որ փոխանակ արհամարհելու զայն՝ անորոժանօք կ'ուտեն : Երբզը առատ ձէթ կու տայ , և կա-

շին՝ ուրիշ շատ ձկանց կաշւոյն պէս՝ փայտէ ու փղոսկրէ գործածներ յղկելու կը ծառայէ : Բնութեամբ սաստիկ շատակեր է ուռնաձուկը , և սովորաբար կ'ապրահայնէ՝ կը կերակրի : Ստանալու է նաև մարդկանց համար , որ նաւուն ընթացիցը միջոց տեղ տեղ կը վախեն անկէց ոչ ինչ ընդհատ ի շանաձուկէ : Օրաւոր և ամուր կարծելով կ'որսան զանիկայ , որոնց ծայրը խոզու գիրուց կամ միս զրուած կ'ըլլայ :

1 Գ. Դ. Раіе. ՏՃ. Բէթի ԴԱԼԵԸ :

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Գիտքս Իննգսնէրորդի Դարաս : — Աշխարհքիս սկզբանէն չեղաւ դար մը այնպէս բազմաբեղուն կարևոր գիւտերով՝ ինչպէս Իննգստաներորդ Դարուն առաջին կէսը :

Յառաջ քան զամի 1810՝ չոգենաւ մը չկար , և չոգին դեռ մեքենաները չէր շարժեր . Ֆրէզըն առաջին չոգենաւն ջուր նետեց 1807 տարւոյն , իսկ հիմա 3,000 չոգենաւ ովկիանոսը կը պատահեն : Գրեթէ ամէն քաղաքականացեալ ազգաց գետերը չոգենաւներով ծածկուած են : Այս դարուս սկիզբը երկրիս երեսը տեղ մը երկաթուղի չկար , իսկ հիմա միայն Միացեալ Նահանգք 8,797 մղոն երկայնութեամբ երկաթուղի ունին , որուն ծախք գնաց 286 միլիոն տոլար : Իսկ Անգլիա և Ամերիկա 22,000 մղոն երկայնութեամբ երկաթուղի ունին : Շոգեկառքն հիմա քանի մը ժամուան մէջ այնպիսի հեռաւորութիւններ կը կտրէ կ'անցնի , որ առաջ օրեր ու շաբաթներ պէտք էին այս հեռաւորութիւնները կտրելու : Լուր մը որ Պոլսէն Բարիզ հասնելու համար առաջ շաբաթներ պէտք էին , հիմա մէկ մանրերկրորդին մէջ կը հասնի եւրօտրական հեռագրին ձեռքով , որուն գործածութեան սկիզբն 1843ին եղաւ :

Վրդայեան բարդը 1800ին ծանօթացաւ , և եւրօտրամագնիսութիւնն 1821ին :

Լուսաւորութեան կազն 1800ին դեռ անծանօթ էր . հիմա գրեթէ ամէն գլխաւոր քաղաք ասով լուսաւորուած է : Տակէր 1839ին ծանօթացուց աշխարհի իր հրաշալի գիւտը : Անկէ քանի մը տարի վերջն ալ բամբակեայ վառօդն ու բրոնզի մը գտնուեցան : Վերջապէս երկրագործական բնալուծութիւնը և մեքենայից երկրագործութեան տուած ձեռնառութիւնը երկրիս սղաղաբերութիւնն յանձախա աճեցուցին :

Ձեռնարանսքս ի Նիւ Եօսքս : — Նախընթաց տարուան ու առաջիկայիս մէջ եղած վաճառականական տագնապէն առաջ , Նիւ Եօսք 24,883 գործարան կար , որոնց մէջ կ'աշխատէին 155,159 երկ մարդ , 37,771 կնիկ մարդ , 15,736 աղայք 18 տարուրէ վար , և 6,233 աղջկունք 16 տարուրէ վար . ընդ ամէնը 214,899 հոգիք :

Երկրագործութեան գործեաց գործարաններն 2,474 աշխատաւոր ունէին . մետաղական գործարաններն՝ 33,946 . ոստայնակութեան գործարանները՝ 19,669 . քիմիական նիւթոց գործարան-

ները՝ 14,646 • տապակագործք՝ 1,872 • շոգեշարժ մեքենայք՝ 4,348 • ծովային շինուածք՝ 4,786 • տեսարանական ու չափաբերական գործիք՝ 337 • ճարտարապետք և որմնագիրք՝ 5,317 • կառա- գործք՝ 8,226 • ջրհանագործք՝ 511 • պարտիզա- պանք՝ 3,624 • կարասիք՝ 21,514 • ապակեգործք և խեցեղէն անօթարարք՝ 12,313 • խոհակերոցի սպասուց շինողք՝ 9,679 • զարդարարք և արուեստ- տագէտք՝ 6,981 • զինագործք՝ 563 • զինուորական կահուց պատրաստողք՝ 38,195 : — Աւուրչէքն էր, միջական հաշուով, 4 ֆր • և 15 հարիւրորդ տո մի գործաւոր : — Պէտք է զիտել որ այս գա- սաւորութեանս մէջ չմտան ոչ կոշկարարք, ոչ խոյրարարք, ոչ գութապագործք, ոչ դերձակք, և այլն, որոնք բոլորը մէկտեղ մեծ բազմութիւն մը արուեստաւորաց կը կացուցանեն :

Թւի՛ի գործածութիւնն 'ի Գաղլիա, յԱֆրիկա և 'ի Միջերկրացի Կասանքս : — Գաղղիա, որ 36 միլիոն բնա- կիչ ունի, տարուէ տարի 71 միլիոն հազարակրամ թուղթ կը շինուի, որուն եօթներորդ մասը միայն դուրս կ'ելլէ : Անգղիա, որ 28 միլիոն բնակիչ ու- նի, տարին 67 միլիոն հազարակրամ թուղթ կը շինուի : Իսկ Միացեալ Նահանգք, որուն բնա- կիչն է Գաղղիոյ ու Անգղիոյ բնակչաց քառորդը, տարին իբր 138 միլիոն հազարակրամ թուղթ կը շինուի, որ է ըսել այնչափ՝ որչափ որ Եւրոպիոյ այս երկու մեծ տերութեանց մէջ կը շինուի :

Աստորալիայէն դուրս ելած ասիայն բաժանութիւնը : — Աստորալիայէն դուրս ելած ոսկւոյն քանակու- թիւնը 1853էն ետե տարուէ տարի աճեցաւ, և այն վայնն որ ունեցան ոսկեխնդիրք առջի բերան ոսկեքեր խաւերուն ճոխութեանը վրայ, չստու- գուեցաւ : Մանաւանդ թէ նոր նոր հանքեր գը- առուեցան, և բազմութիւ ոսկեխնդիրներ իրենց հրաւիրեցին : Անցեալ տարւոյն վերջերը եօթը տեղ նոր հանքեր գտուեցան, և ասոնց մէջէն Այ- րարատ ըսուած տեղւոյն հանքքան զամենն աւե- լի ճոխ է : Ամուսան մը մէջ 40,000 հոգի վազեցին այն տեղուանքը, և առաջ որ անապատ էին՝ հիմա բազմութիւ բնակիչ ունին :

Աստորալիայէն Եւրոպա մտած ոսկւոյն քանա- կութիւնը հետեալ կերպով է 1853էն սկսեալ .

- 1853 • 1,831,468 ունի
- 1854 • 1,633,999
- 1855 • 1,815,284
- 1856 • 2,142,361
- 1857 • 2 միլիոնէն աւելի :

Արեւիկայ հաշուի Բերք : — Ամերիկոյ Միա- ցեալ Նահանգները միայն տարուէ տարի, միջա- կան հաշուով, կու տան աւելի քան 200 միլիոն հարիւրալիտր կամ 603 միլիոն քիլէ մարացորեն, ու 57 միլիոն հարիւրալիտր կամ 172 միլիոն քիլէ ցորեն • ասոնցմէ 12 միլիոն հարիւրալիտր հազիւ թէ դուրս կը հանեն, ու մնացածն հոն կը սպա-

ռուի 'ի անուագ բնակչաց և կենդանեաց : Սպա- նիական գաղթականներն ու Պրագլի ալ կը մշակեն մարացորեն շատ քանակութեամբ :

Աֆրիկայ արեւելի թագ : — Անգղիոյ արքունի թագին վրայի ակունքներն են, քսան ագամանգ վարսակալին վրայ, իւրաքանչիւրն 37,500 ֆրանգ, որ կ'ընէ 750,000 ֆրանգ • երկու խոշոր ագա- մանգ մէջտեղը, 100,000 ֆր • քառասունըջորս վարդատես ագամանգ առաջին երկուքին բոլոր- տիքը, 2,500 ֆր • չորս խաչ, իւրաքանչիւրին վրայ քսանըհինգ ագամանգ, 300,000 ֆր • չորս խոշոր ագամանգ՝ խաչերուն ծայրը, 100,000 ֆր • տա- սուերկու ագամանգ շուշանի ծաղկին վրայ, 250,000 ֆր • տասնութը մանր ագամանգ նոյն ծաղկին վրայ, 50,000 ֆր • այլ և այլ մարգարիտ- ներ, ագամանդներ, և այլն, շերտերուն ու խա- չերուն վրայ, 250,090 ֆր • հարիւր քառասունը- մէկ վարդատես ագամանգ, 12,500 ֆր • քսանը- վեց ագամանգ գագաթան խաչին վրայ, 7,500 ֆր • երկու կարգ մարգարիտներու եզերաց վրայ, 7,500 ֆրանգ : Ընդ ամենը բոլոր ակունքները, առանց հաշուելու մետաղը, կ'ընեն 2,797,500 ֆրանգ :

Մե-ի, Լ-ի և Ե-ի Բեռ : — Ուրալոյ անու- նով գաղղիային 1853ին Կովկասային գաւառները ճանապարհորդելով տեսեր է որ այն կողմերու բնակիչները շատ օգտակար կերպով կը գործածեն միջատներու դէմ կարմիր աւթիմոնի՝ ըսուած բու- սին փոշին : Կարմիր աւթիմոնը խոնաւ ու ջրաբքի տեղուանք կը բռնանի • արմատովը կը հանեն՝ երբ ծաղկած է, ու արեւուն կը չորցնեն, երկսնա- քարով կ'աղան ու փոշի կը ծախեն :

Արեւոսի Բեռ : — Ամերիկացիք այրեցուքի գէղ հասարակ եղիճով գունաւորած ալգուլ կը գործ- ածեն : Եղիճը արմատէն կը կտրեն ու կտոր կտոր կ'ընեն և ալգուլի մէջ կը ձգեն • քանի մը օրէն ետ- քը հեղուկը վրայէն կ'առնուն ու շիշերու մէջ գոց կը պահեն : Երբոր հարկ ըլլայ գործածել, լաթ մը կը թրջեն անով ու այրեցուքին վրայ կը կապեն :

Այրեցուքի աղէկ գեղ են նաև ալգալիները, ինչպէս են ամմոնիաք, բոգաս կամ կիլոզական ստաա, որոնք ջրոյ մէջ լուծելով՝ լաթ մը թրջելու է ու շուտ մը այրեցուքին վրայ գնելու է :

Բայց քան զամենն լաւագոյն ու գիւրին գէղ է այրեցուքի հում հաւկըթի ճերմրկուցը, որով պէտք է պատել վերքը :

1 Գղ. Pyrèthre. ՏՃ. Նիւ-լէ օրն :